ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,Արզնի,
5-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 6
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 02 » ապրիլ 2025 թվական №39**

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ № 05 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջի՝

Համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հաստատել՝ համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 02-ի № 05 արտահերթ նիստի օրակարգը՝

1) Արզնի համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման մասին :

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 15-ի № 02-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին :

4) ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի կողմից առևտրային ընկերության մասնակից դառնալու մասին :

5) Արզնի համայնքի կարիքների համար հողամաս և շինություն ձեռք բերելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին ստորագրման օրվանից:

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ

ԲԵՆՅԱՄԻՆՈՎ ՌԱԴԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ

ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽՈՋԱՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ

ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐՋՈԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք,ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 02 » ապրիլ 2025 թվականի №40**

## ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵՅԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին.

Համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Արզնի համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման մասին ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ
ԲԵՆՅԱՄԻՆՈՎ ՌԱԴԻԿ
ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ԽՈՋԱՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ
ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ
ՆԱԴՈՅԱՆ ՔԱԻԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,Արզնի,
5-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 6
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 02 » ապրիլ 2025 թվական №41-Ն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15–Ի N 02-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝

Համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 15-ի «Արզնի համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 02-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ
ԲԵՆՅԱՄԻՆՈՎ ՌԱԴԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ

ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽՈՋԱՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ

ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ.(0222)94880 arzni_meria@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 02 » ապրիլ 2025 թվականի N 42**

## ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին և հիմք ընդունելով միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 24-ի թիվ 2/փ-100 եզրակացությունը՝

Համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և փոփոխելԿոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Դավիթ Անդրանիկի Մարկոսյանին սեփականության իրավունքով պատկանող 07-016-0445-0003 կադաստրային ծածկագրով 0.28095 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հնդավոր հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության :
2. Հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված համայնքի բյուջե 12480000 / տասներկու միլիոն չորս հարյուր ութսուն հազար / ՀՀ դրամ վճարելուց հետո:
3.Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի

սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ

ԲԵՆՅԱՄԻՆՈՎ ՌԱԴԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ

ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽՈՋԱՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ

ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք,ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 02 » ապրիլ 2025 թվականի №43**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14–րդ հոդվածի և 16–րդ հոդվածի 14–րդ և 19–րդ մասերի պահանջներին, ինչպես նաև ելնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և մասնավորապես, Արզնի համայնքի տարածքում աղբահանության աշխատանքների իրականացման բարելավման և Կոտայքի ու Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մասնակից դառնալու նպատակից՝

Համայնքի ավագանին **որոշում է՝**

1. ՀՀ, Կոտայքի մարզի, Արզնի համայնքում աղբահանության աշխատանքների իրականացման բարելվման նպատակով դառնալ Ծրագրի շրջանակներում հիմնադրված «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՍՊԸ) (պետական գրանցման համար՝ 85.110.928615, պետական գրանցման ամսաթիվ՝ 24.09.2016թ., ՀՎՀՀ՝ 03021779, գործունեության հասցե՝ ՀՀ, Կոտայք, Հրազդան, Սահմանադրության հր., 1 վարչ.շ.) (այսուհետ՝ Ընկերություն) մասնակից:

2. Սույն որոշմամբ նշված արդյունքին հասնելու համար սույն որոշումն ընդունելու պահից լիազորել համայնքի ղեկավարի տեղակալ Էդիկ Հայկազի Աֆյանին (անձը

հաստատող փաստաթուղթ՝ AU0527374 , տրված՝ 059-ի կողմից , 29.11.2021թ․–ին, հաշվառման հասցե՝ Կոտայքի մարզ, Արզնի համայնք, 5-րդ փողոց 25 տուն) անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով հանդես գալ Արզնի համայնքի անունից, ստորագրել Ընկերության նոր կանոնադրության հավելվածում, ստորագրել սույն որոշումից բխող իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր, Արզնի համայնքին պատկանող լիազորությունների, իրավունքների և պարտականությունների ողջ ծավալով մասնակցել Ընկերության ընդհանուր (հերթական և/կամ/ արտահերթ ժողովներին):

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ

ԲԵՆՅԱՄԻՆՈՎ ՌԱԴԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ

ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽՈՋԱՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ

ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք,ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 02 » ապրիլ 2025 թվականի №44**

## ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներին և հիմք ընդունելով « ԷՔՍՊԵՐՏ ՕՑԵՆԿԱ » ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի գնահատման թիվ 01-S/25.03.2025 հաշվետվությունը.

Համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Թույլատրել ՝ Արզնի համայնքի ղեկավարին համայնքի կարիքների համար ձեռք բերել ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի 5-րդ փողոց 50/2 հասցեում գտնվող 07-016-0028-0051 կադաստրային ծածկագրով 0.0675 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասը և 557.6 քմ մակերեսով հանրախանութը / անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20012025-07-0162 վկայական /:
2. Համայնքի բյուջեի համապատասխան հոդվածից հատկացնել 88800000 / ութսունութ միլիոն ութ հարյուր հազար /ՀՀ դրամ հողամասի և շինության ձեռքբերման նպատակով , որից 10 %-ի չափով 8800000 / ութ միլիոն ութ հարյուր հազար / ՀՀ դրամը նախատեսվում է փոխանցել որպես հարկային պարտավորություն:

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ

ԲԵՆՅԱՄԻՆՈՎ ՌԱԴԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ

ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽՈՋԱՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ

ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐՔՈԵՎ